Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1238 - Լ որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սպորտը կարևոր դեր ունի հասարակության ֆիզիկական, մտավոր և սոցիալական բարեկեցության ապահովման գործում: Սիրողական սպորտը, որը հասանելի է բոլոր տարիքային խմբերին և չի հետապնդում մասնագիտական կամ ֆինանսական շահ, զգալի ազդեցություն ունի առողջ ապրելակերպի խթանման, համայնքների համախմբման և երիտասարդների դաստիարակության վրա:

2. Սիրողական սպորտի կայուն զարգացումը պահանջում է ոչ միայն պետական աջակցություն, այլև մասնավոր հատվածի ներգրավում: Այն արդյունավետ մեխանիզմ է, որը թույլ է տալիս համատեղել պետական կառույցների ռեսուրսները և մասնավոր բիզնեսի ֆինանսական ու կառավարչական հնարավորությունները՝ ստեղծելու պայմաններ սիրողական սպորտի առաջմղման համար:

3. Մասնավոր գործընկերության արդյունավետ իրականացումը կարող է զգալիորեն խթանել սիրողական սպորտի զարգացումը՝ ապահովելով ֆինանսավորում, տեխնոլոգիական նորարարություններ և լայնածավալ ներգրավվածություն: Այն խթանում է ոչ միայն սպորտի զարգացումը, այլև առողջ հասարակության և համայնքների ձևավորումը:

2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. *Ծրագրի նպատակն է* սիրողական սպորտում ստեղծել կայուն և արդյունավետ համագործակցություն պետական և մասնավոր հատվածների միջև՝ նպաստելով զանգվածային սպորտի զարգացմանը, ֆիզիկական ակտիվության խթանմանը և առողջ ապրելակերպի տարածմանը: Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1) ֆինանսավորման ավելացում – մասնավոր ներդրումների ներգրավում՝ սպորտային ենթակառուցվածքների կառուցման, վերանորոգման և պահպանման համար.

2) մատչելիության բարձրացում – սպորտային ակումբների, դպրոցների և միջոցառումների հասանելիության ապահովում ավելի լայն հանրության համար.

3) տեխնիկական և կառավարչական փորձի ներգրավում – մասնավոր հատվածի կառավարման հմտությունների և նորարարական մոտեցումների օգտագործում սպորտային ծրագրերի արդյունավետության բարձրացման համար.

4) մրցունակ միջավայրի ստեղծում – սպորտային ակումբների և սիրողական մրցաշարերի կազմակերպման խթանում՝ մասնակցության մակարդակը և որակը բարձրացնելու նպատակով.

5) հանրային առողջության բարելավում – ֆիզիկական ակտիվության խթանում, որը կնպաստի հիվանդությունների կանխարգելմանը և առողջ ապրելակերպի մշակույթի զարգացմանը.

6) տեղական համայնքների զարգացում – սպորտի միջոցով սոցիալական ինտեգրացիայի խթանում, երիտասարդների զբաղվածության ապահովում և համայնքային զարգացում:

5. Ծրագրի խնդիրներն են՝ սիրողական սպորտի զարգացման ծրագրերը բախվում են մի շարք խնդիրների, որոնք կարող են խոչընդոտել դրանց արդյունավետությանը: Ահա դրանցից մի քանիսը՝

1) ֆինանսական սահմանափակումներ՝

ա. պետական բյուջեի սահմանափակվածությունը կարող է դժվարացնել ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորումը,

բ. մասնավոր հատվածի ներգրավվածությունը երբեմն կարող է պայմանավորված լինել միայն կարճաժամկետ շահույթով, ինչը նվազեցնում է ծրագրերի կայունությունը.

2) հասարակության ներգրավվածության պակաս՝

ա. եթե ծրագրերը բավարար չափով չեն ընդգրկում բնակչության բոլոր շերտերին, ապա դրանք կարող են չարդարացնել իրենց նպատակները,

բ. սիրողական սպորտի զարգացման համար անհրաժեշտ է լայն հանրային աջակցություն, ինչը երբեմն անտեսվում է.

3) մարդկային ռեսուրսների խնդիրներ՝

ա. մարզական հաստատություններում երբեմն կարող է չլինել համապատասխան հմտություններով և փորձառությամբ մասնագետների բավարար քանակ,

բ. մասնավոր հատվածը կարող է կենտրոնանալ միայն առևտրային առումով շահավետ մարզաձևերի վրա՝ անտեսելով զանգվածային սպորտի կարևորությունը.

4) կառուցվածքային խնդիրներ՝

ա. հասանելի մարզական կառույցների պակասը կամ դրանց վատ վիճակը կարող է խոչընդոտել ծրագրերի հաջողությանը,

բ. կառուցված մարզահրապարակները երբեմն դառնում են ավելի հասանելի վճարունակ խմբերի համար, ինչը հակասում է սիրողական սպորտի համընդհանուր հասանելիության սկզբունքին.

5) կայունության խնդիր՝ սիրողական սպորտի զարգացման համար անհրաժեշտ է երկարաժամկետ պլանավորում, մինչդեռ որոշ ծրագրեր կարող են ունենալ ժամանակավոր բնույթ՝ կախված տնտեսական կամ քաղաքական գործոններից:

3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք հիմնական փուլերով:

7. Ծրագրի իրականացման առաջին փուլում նախատեսվում է Արարատ, Եղեգնաձոր և Մարտունի համայնքներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով կառուցել «Զորախաչ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն)

պատվիրակմամբ նախագծված երեք սպորտային համալիր: Նշված փուլի իրա-կանացման նպատակով ընկերությունը մինչև 2025 թվականի ավարտը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) կտրամադրի նշված համայնքներում սպորտային համալիրներ կառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ ներառյալ համապատասխան փորձաքննությունները: Ձեռք կբերվի մեկ տիպային նախագիծ (Արարատ համայնքում կառուցվող սպորտային համալիր), որը կտեղակապվի մյուս երկու վայրերում (տեղակապումն իրականացվում է շենքի վերգետնյա մասի պահպանմամբ, իսկ ստորգետնյա մասը, կախված տեղանքի առանձնահատկություններից, փոփոխվում է): Սույն կետի կատարումն ապահովող գործառույթների ծախսերն իրականացվում են ընկերության միջոցներով: Աշխատանքների պատվիրատու հանդիսացող պետական մարմինը կապահովի շինարարության թույլտվությունների ձեռքբերման գործընթացը:

8. Ծրագրի իրականացման առաջին փուլում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով նախարարության կողմից շինարարական աշխատանքների, տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում (հեղինակային հսկողությունը կիրականացվի նախագծողի կողմից), ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության Արարատ, Եղեգնաձոր և Մարտունի համայնքներում կկառուցվեն սպորտային համալիրներ: Առաջին փուլը կիրականացվի 2026 և 2027 թվականներին, և կառուցված գույքի նկատմամբ կգրանցվի Հայաստանի Հանրապետության սեփականու-թյան իրավունքը:

9. Ծրագրի իրականացման երկրորդ փուլում նախատեսվում է ընկերության կողմից միջազգային չափանիշներին համապատասխան սպորտային և անհրաժեշտ այլ գույքի և սարքավորումների գնում և կառուցված սպորտային համալիրների ամբողջովին կահավորում: Երկրորդ փուլը կիրականացվի մինչև 2027 թվականի ավարտը: Նշված շարժական գույքը ձեռք է բերվելու ընկերության կողմից, որի փաստացի արժեքի 80 տոկոսը կփոխհատուցվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից (ձեռք բերված գույքի 80 տոկոսը կհանդիսանա պետական սեփականություն, 20 տոկոսը՝

ընկերության սեփականություն): Գույքի թարմացումը կիրականացվի ըստ անհրաժեշտության (հիմք ընդունելով տվյալ գույքի համար սահմանված օգտակար ծառայության ժամկետը)՝ ծախսերն իրականացնելով նույն սկզբունքով:

10. Ծրագրի իրականացման երրորդ փուլում նախատեսվում է մինչև 2027 թվականի ավարտը Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արարատ, Եղեգնաձոր և Մարտունի համայնքներում կառուցված սպորտային համալիրները ընկերությանը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ (առանց ենթակապալառության)՝ հետևյալ պայմաններով՝

1) հավատարմագրային կառավարիչը իր սեփական միջոցներով հոգում է սույն ծրագրի շրջանակներում կառուցված սպորտային համալիրների պահպանման և շահագործման հետ կապված ծախսերը (կառուցված սպորտային համալիրների շահագործման 1-ին տարում կառավարչին կփոխհատուցվի համալիրների 1 տարվա կոմունալ ծախսերը՝ եռամսյակային պարբերականությամբ).

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներից փոխհատուցման ենթակա են հավատարմագրային կառավարչի այն ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են սիրողական սպորտի զարգացմանն ուղղված և տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցառումների իրականացման հետ.

3) կառավարչի վարձատրության չափը հավասար է հավատարմագրային կառավարման արդյունքում ձևավորվող զուտ շահույթին.

4) հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը 20 տարի է, ինչը կողմերի համաձայնությամբ կարող է երկարացվել ևս 20 տարով.

5) ծրագրում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման դեպքում կառավարչին կտրվի գնման նախապատվության իրավունք:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

11. Ակնկալվող արդյունքներն են՝

1) ֆինանսավորման և ռեսուրսների ավելացում – մասնավոր հատվածի ներգրավմամբ հնարավոր կլինի ստանալ լրացուցիչ ֆինանսական աջակցություն, որն անհրաժեշտ է սպորտային ենթակառուցվածքների զարգացման, մարզահանդերձանքի, մարզական սարքավորումների ձեռքբերման և մրցումների կազմակերպման համար.

2) մարզական ենթակառուցվածքի զարգացում – մասնավոր ներդրումները կարող են նպաստել նոր մարզահրապարակների, մարզասրահների և սպորտային կենտրոնների կառուցմանը կամ վերանորոգմանը, ինչը կբարելավի պայմանները սիրողական մարզիկների համար.

3) սպորտային ծրագրերի և միջոցառումների ավելացում – ծրագիրը թույլ կտա կազմակերպել ավելի շատ մարզական միջոցառումներ, սիրողական լիգաներ, փառատոներ և առողջ ապրելակերպի խթանման ծրագրեր.

4) մասնագիտական աջակցություն և կրթություն – մասնավոր հատվածի ներգրավմամբ հնարավոր կլինի ներգրավել որակյալ մարզիչների, խորհրդատուների և փորձագետների, ովքեր կնպաստեն սիրողական մարզիկների զարգացմանը.

5) համայնքային ներգրավվածություն – սպորտային միջոցառումների ու ծրագրերի զարգացումը կնպաստի բնակիչների մասնակցության ակտիվացմանը, կամավորական նախաձեռնությունների ավելացմանը և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը.

6) նորարարական տեխնոլոգիաների կիրառություն – մասնավոր ոլորտը կարող է ներդնել նորարարական լուծումներ (օրինակ՝ թվային հարթակներ, մարզումների վերլուծության ծրագրեր), որոնք կբարելավեն մարզումների արդյունավետությունն ու հասանելիությունը.

7) տնտեսական զարգացում – սպորտային ենթակառուցվածքների զարգացումը կնպաստի տեղական բիզնեսների աճին (սպորտային խանութներ, սննդի կետեր, տրանսպորտային ծառայություններ), ինչպես նաև տուրիզմի խթանմանը, եթե սպորտային միջոցառումները գրավեն միջազգային ուշադրություն.

8) առողջապահական օգուտներ – սպորտի հասանելիության մեծացումը կնպաստի ֆիզիկական ակտիվության խթանմանը, առողջական խնդիրների կանխարգելմանը և ընդհանուր առողջապահական ծախսերի նվազմանը:

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

12. Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, որով նախատեսվում է ձեռք բերել՝

ա. ***շինարարական աշխատանքներ***՝ 4,067,156.8 հազ. դրամ (ըստ խոշորացված ցուցանիշների հաշվարկի՝ յուրաքանչյուր սպորտային համալիրի շինմոնտաժային աշխատանքների արժեքը կկազմի 1,355.72 մլն դրամ),

բ. ***տեխնիկական հսկողության ծառայություններ***՝ 122,014.7 հազ. դրամ (ըստ խոշորացված ցուցանիշների հաշվարկի՝ յուրաքանչյուր սպորտային համալիրի տեխնիկական հսկողության ծառայությունը կարժենա 40,671.57 հազ. դրամ),

գ. ***հեղինակային հսկողության ծառայություններ***՝ 24,402.9 հազ. դրամ (ըստ խոշորացված ցուցանիշների հաշվարկի՝ յուրաքանչյուր սպորտային համալիրի հեղինակային հսկողության ծառայությունը կարժենա 8,134.31 հազ. դրամ),

դ. ***սպորտային համալիրների գույքի ձեռքբերման արժեքի 80 տոկոսի փոխհատուցում՝*** 943,375.2 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի համար պահանջվող գույքի արժեքը գնահատվել է 393,073.0 հազ. դրամ),

ե. ***սպորտային համալիրների 1 տարվա կոմունալ վճարների փոխհատուցում՝*** 256,412.7 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի տարեկան կոմունալ ծախսերը կկազմեն միջինում 85,470.9 հազ. դրամ),

զ. ***սպորտային համալիրների գույքի թարմացման արժեքի 80 տոկոսի փոխհատուցում՝*** 754,700.2 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի գույքի թարմացման արժեքը գնահատվել է 314,458.4 հազ. դրամ),

ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվող ծախսը 20 տարիների ընթացքում կկազմի 6,168.1 մլն դրամ (ընդհանուր ծախսերի 45.7 տոկոսը).

2) ընկերության սեփական միջոցները, որոնք կուղղվեն հետևյալ ծախսերին՝

ա. ***նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում*** (ներառյալ շինարարության թույլտվությունների ու համապատասխան փորձաքննությունների համար ծախսերը)՝ ***65,613.71 հազ. դրամ*** (Արարատի սպորտային համալիր՝ 47,242.53 հազ. դրամ, Եղեգնաձորի և Մարտունու սպորտային համալիրներ՝ յուրաքանչյուրի նախագծի տեղակապման համար 9,185.59 հազ. դրամ),

բ. ***սպորտային համալիրների գույքի ձեռքբերման արժեքի 20 տոկոս՝*** 235,843.8 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի համար պահանջվող գույքի արժեքը գնահատվել է 393,073.0 հազ. դրամ),

գ. ***սպորտային համալիրների 19 տարվա կոմունալ վճարներ՝*** 4,871,841.4 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի տարեկան կոմունալ ծախսերը կկազմեն միջինում 85,470.9 հազ. դրամ),

դ. ***սպորտային համալիրների պահպանման և շահագործման հետ կապված այլ տարեկան ծախսերը՝*** 2,160,000.0 հազ. դրամ (յուրաքանչյուր սպորտային համալիրի տարեկան այլ ծախսերը կկազմեն միջինում 36,000.0 հազ. դրամ, 20 տարում՝ 720,000.0 հազ. դրամ),

ԸՆԴԱՄԵՆԸ՝ ընկերության կողմից նախատեսվող ծախսը 20 տարիների ընթացքում կկազմի 7,333.3 մլն դրամ (ընդհանուր ծախսերի 54.3 տոկոսը):

Ընկերության միջոցներից նախատեսվում է վճարել նաև սպորտային համալիրների մարզչական, օժանդակ և վարչական թվով մոտ 100 աշխատողի աշխատավարձը (միջին ամսական աշխատավարձը կկազմի 300 հազ. դրամ), որը մեկ տարվա ընթացքում կկազմի մոտ 360 մլն դրամ, 20 տարվա ընթացքում՝ մոտ 7,2 մլրդ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ